«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
և
Անկախ աուդիտորի հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Տարեկան ֆինանսական հաշվետվություններ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

---

**Բովանդակություն**


3 Անկախ աուդիտորի եզրակացություն

6 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

7 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

8 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

9 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ

11 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ


**Իրավական ձևը՝** Փակ բաժնետիրական ընկերություն

**Հիմնական գործունեության նկարագիրը՝** Էլեկտրական էներգիայի հաղորդում

**Տնօրենների խորհուրդ**

| | |
|---|---|
| Արտաշես Կիրակոսյանը | ՀՀ ԷԵԲՊ նախարարության գլխավոր քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար |
| Տիգրան Մելքոնյանը | ՀՀ ԷԵԲՊ նախարարության արտաքին կապերի վարչության պետ |
| Վարդան Բունիազյանը | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության անվտանգության և վերահսկողության տնօրենի տեղակալ |
| Արմեն Մելիք-Իսրայելյանը | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ |
| Թորգոմ Մադոյանը | ՀԱՊՀ-ի էներգետիկայի և էլեկտրատեխնիկայի ինստիտուտի ավարտական ամփոփիչ հանձնաժողովի նախագահ, «ՆՏ սերվիս» ՍՊ ընկերության տնօրեն |
| Արտակ Ալբերտյանը | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության էներգետիկայի և տնտեսության այլ ոլորտներում բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ |
| Հայկ Հարությունյանը | «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն, Խորհրդի անդամ |

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

# Անկախ աուդիտորի եզրակացություն

*«ԲԷՑ» ՓԲԸ բաժնետիրոջը*

**Վերապահումով կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԲԷՑ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2018թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի և վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

**Վերապահումով կարծիքի հիմքեր**

(1) ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից Ընկերության 2012-2014թթ. գործունեության մասով կատարված ստուգումների արդյունքներով 2016թ. հունվարի 18-ին կազմված թիվ 30-Ա ակտի համաձայն Ընկերությանն առաջադրվել են 757.7 մլն դրամի չափով շահութաբաժնի և 166.4 մլն դրամնի չափով հաշվարկված տույժերի գծով լրացուցիչ պարտավորություններ՝ հիմնականում կապված Իրան-Հայաստան գազատարի գծով կատարված գործարքների ճանաչման և չափման տարբեր մոտեցումների հետ:
Միաժամանակ առկա են ՀՀ վարչապետի 2016թ. հունիսի 25-ի թիվ N02/23 15/2528-16 և 2017թ. հունվարի 12-ի թիվ N02/23 15/289-17 հանձնարարականները՝ նշված ակտը կասեցնելու և բարձրացված հարցերին գազատարի վաճառքի գործարքի ավարտից հետո անդրադառնալու վերաբերյալ:
Իրան-Հայաստան գազատարի վաճառքի գործարքի ժամկետների և պայմանների, ինչպես նաև ակտի կիրառման հետևանքների անորոշությունների հետ կապված սահմանափակումների պատճառով մենք անկարող էինք որոշել վերը նշված հանգամանքների ազդեցությունը 2018 և 2017թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվերին ավարտված տարիների ֆինանսական հաշվետվություններում արտացոլված եկամուտների, ծախսերի, ակտիվների, պարտավորությունների և կուտակված շահույթի վրա:

(2) Ընկերության և Չինական Liaoning-Efacec Electrical Equipment Co.LTD ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև կնքված Շինուհայր և Ագարակ 2 ենթակայանի վերակառուցման պայմանագրի շրջանակներում Կապալառուի կողմից 31.12.2018թ. դրությամբ ներկայացված և Ընկերության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 1,178 մլն դրամ ընդհանուր գումարի աշխատանքների և ներմուծված սարքավորումների արժեքի վերաբերյալ Ընկերության և Կապալառուի միջև առկա են անհամաձայնություններ:
Մենք անկարող էինք այլընտրանքային ընթացակարգերի կիրառմամբ որոշել սույն կետում նշված հանգամանքների ազդեցության չափը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում արտացոլված՝ վերակառուցվող հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի, Կապալառուին վճարվելիք պարտավորությունների, ինչպես նաև 2018թ. եկամուտների և ծախսերի վրա:

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք),* և պահպանել ենք ՀՄԷՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

**Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

BDO

• ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

• գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

• եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

• գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

***Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ***

Համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև 2011թ. հունիսի 01-ին ստորագրված 8055-AM Վարկային համաձայնագրի և 2014թ.-ի Օգոստոսի 06-ին ստորագրված 8388-AM Վարկային համաձայնագրի 5-րդ բաժնի 1. (a) կետի, ինչպես նաև ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև ստորագրված ենթավարկային համաձայնագրերի դրույթների, Ընկերությունը չի կարող կուտակել նոր պարտքեր, քանի դեռ ԲԷՑ ՓԲԸ եկամուտների և ծախսերի հիմնավորված կանխատեսումները ցույց չեն տա, որ յուրաքանչյուր տարվա համար ԲԷՑ ՓԲԸ կողմից կանխատեսված զուտ եկամուտները առնվազն 1.2 անգամ գերազանցում են այդ տարվա ընթացքում բոլոր պարտքերի (ներառյալ նոր պարտքերը) սպասարկման համար անհրաժեշտ միջոցներին:

Մեր կարծիքով, 2018 դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը պահպանել է նշված վավերապայմանը:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Տնօրեն — Վահագն Սահակյան, FCCA

Աուդիտոր — Հրաչյա Հովհաննիսյան, FCCA
21 հունիսի, 2019թ.
ք.Երևան

BDO

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | Ծանոթ. | 2018թ. հազար դրամ | 2017թ. հազար դրամ |
|---|---|---|---|
| Հասույթ | 5 | 7,857,221 | 12,035,551 |
| Վաճառքի ինքնարժեք | 6 | (4,047,712) | (3,683,494) |
| **Համախառն շահույթ** | | 3,809,509 | 8,352,057 |
| Այլ եկամուտ | 7 | 143,288 | 494,978 |
| Վարչական ծախսեր | 8 | (1,413,379) | (1,603,835) |
| Այլ ծախսեր | 9 | (807,500) | (1,811,456) |
| **Գործառնական գործունեությունից շահույթ** | | 1,731,918 | 5,431,744 |
| Ֆինանսական եկամուտ | 10 | 1,315,233 | 670,740 |
| Ֆինանսական ծախսեր | 11 | (1,606,591) | (497,492) |
| Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(կորուստ) | 12 | 1,554,578 | (2,604,526) |
| **Շահույթ մինչև հարկումը** | | 2,995,138 | 3,000,466 |
| Շահութահարկի գծով ծախս | 13 | (554,692) | (1,850,957) |
| **Տարվա զուտ շահույթ** | | 2,440,446 | 1,149,509 |
| **Այլ համապարփակ արդյունք** | | - | - |
| **Տարվա ընդամենը համապարփակ արդյունք** | | 2,440,446 | 1,149,509 |

*Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-49) հաստատվել են և թույլատրվել հրապարակման համար 21 հունիսի 2019թ., ստորագրությամբ՝*

Հայկ Հարությունյան
Գլխավոր տնօրեն

Գևորգ Մուրադյան
Գլխավոր հաշվապահ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | Ծանոթ. | 31.12.18թ. *հազար դրամ* | 31.12.17թ. *հազար դրամ* |
|---|---|---|---|
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 14 | 85,177,078 | 69,800,874 |
| Ոչ նյութական ակտիվներ | | 128,025 | 29,087 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 15 | 1,087,128 | 556,219 |
| Երկարաժամկետ դեբիտորական պարտքեր | 16 | 494,803 | 893,110 |
| Կանխավճարներ հիմնական միջոցներ ձեռքբերելու համար | 17 | 5,841,190 | 8,801,081 |
| | | 92,728,224 | 80,080,371 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 18 | 2,019,772 | 1,779,719 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 16 | 2,072,459 | 3,108,487 |
| Տրված փոխառություններ | | 4,688 | 5,008 |
| Ժամկետային ավանդներ | 19 | 12,985,387 | 8,042,165 |
| Դրամական միջոցներ | 20 | 232,496 | 1,227,704 |
| | | 17,314,802 | 14,163,083 |
| Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | | 76,602 | - |
| **Ընդամենը ակտիվներ** | | 110,119,628 | 94,243,454 |
| **Սեփական կապիտալ և պարտավորություններ** | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 21 | 8,995,388 | 8,995,388 |
| Էմիսիոն եկամուտ | 21 | (49,284) | (49,284) |
| Պահուստային կապիտալ | 21 | 272,344 | 272,344 |
| Կուտակված շահույթ | 21 | 14,204,548 | 11,764,102 |
| | | 23,422,996 | 20,982,550 |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 22 | 64,383,189 | 54,518,667 |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 23 | 518,142 | 519,046 |
| | | 64,901,331 | 55,037,713 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | 22 | 4,018,182 | 1,607,632 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 24 | 17,777,119 | 16,615,559 |
| | | 21,795,301 | 18,223,191 |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | 110,119,628 | 94,243,454 |

*Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-49) հաստատվել են և թույլատրվել հրապարակման համար 21 հունիսի 2019թ., ստորագրությամբ՝*

Հայկ Հարությունյան
Գլխավոր տնօրեն

Գևորգ Մուրադյան
Գլխավոր հաշվապահ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | 2018թ. հազար դրամ | 2017թ. հազար դրամ |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր** | | |
| Տարվա շահույթ | 2,440,446 | 1,149,509 |
| *Ճշգրտումներ* | | |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 3,620,405 | 2,962,797 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | 1,151 | 6,290 |
| Պաշարների օտարումից և դուրսգրումներից վնաս/(օգուտ) | 10,465 | 11,103 |
| Տոկոսային ծախս | 1,606,591 | 497,492 |
| Շահութահարկի գծով ծախս | 554,692 | 1,850,957 |
| Ֆինանսական եկամուտ | (1,315,233) | (670,740) |
| Շնորհներից եկամուտ | (904) | (50,267) |
| Դեբիտորական պարտքերի դուրս գրում և պահուստավորում | (609,971) | 756 |
| Փոխարժեքային տարբերությունից օգուտ | (1,554,578) | 2,604,526 |
| **Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները** | 4,753,064 | 8,362,423 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն | 2,044,299 | (636,649) |
| Պաշարների փոփոխություն | (250,518) | 25,756 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն | 1,661,907 | 4,094,875 |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ** | 8,208,752 | 11,846,405 |
| Վճարված շահութահարկ | (1,529,993) | (1,442,676) |
| **Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | 6,678,759 | 10,403,729 |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հիմնական միջոցների ձեռքբերումների գծով վճարներ | (16,216,159) | (14,914,708) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | 2,750 | 22,714 |
| Փոխառությունների մարում | 320 | 1,186 |
| Ժամկետային ավանդների ներդրում | (4,943,222) | (5,820,855) |
| Ստացված տոկոսային եկամուտ | 1,315,233 | 670,740 |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ** | (19,841,078) | (20,040,923) |
| **Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Վարկերից և փոխառություններից մուտքեր | 15,362,954 | 12,676,538 |
| Վարկերի և փոխառությունների մարումներ | (1,279,596) | (1,280,598) |
| Վճարված տոկոսներ | (1,922,415) | (1,429,035) |
| Ստացված շնորհներ | - | 47,682 |
| Վճարված շահաբաժիններ | - | (163,370) |
| **Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | 12,160,943 | 9,851,217 |
| Դրամական միջոցների զուտ աճ | (1,001,376) | 214,023 |
| Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա | 6,168 | 9,882 |
| Դրամական միջոցների մանցորդը տարեսկզբին | 1,227,704 | 1,003,799 |
| **Դրամական միջոցների մնացորդը տարեվերջին** | 232,496 | 1,227,704 |

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | Կանոնադրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Պահուստային կապիտալ | Չբաշխված եկամուտ | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ |
| Մնացորդներ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 8,995,388 | (49,284) | 272,344 | 11,764,102 | 20,982,550 |
| Տարվա զուտ շահույթ | - | - | - | 2,440,446 | 2,440,446 |
| Մնացորդներ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 8,995,388 | (49,284) | 272,344 | 14,204,548 | 23,422,996 |

| | Կանոնադրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Պահուստային կապիտալ | Չբաշխված եկամուտ | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ |
| Մնացորդներ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 8,820,728 | (45,551) | 240,739 | 10,987,280 | 20,003,196 |
| Բաժնետիրական կապիտալի ավելացում կուտակված շահաբաժնի հաշվին | 177,712 | - | - | (177,712) | - |
| Կանոնադրական կապիտալի նվազեցում | (3,052) | (3,733) | - | - | (6,785) |
| Տարվա զուտ շահույթ | - | - | - | 1,149,509 | 1,149,509 |
| Շահաբաժինների բաշխում | - | - | - | (163,370) | (163,370) |
| Փոխանցում պահուստային կապիտալին | - | - | 31,605 | (31,605) | - |
| Մնացորդներ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 8,995,388 | (49,284) | 272,344 | 11,764,102 | 20,982,550 |

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ**
**2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**


Անկախ աուդիտորի եզրակացություն ........ 3
1. Ընկերության մասին ........ 11
2. Պատրաստման հիմունքներ ........ 12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ ........ 14
4. Ֆինանսական գործիքներ - Ռիսկերի կառավարում ........ 15
5. Հասույթ ........ 21
6. Վաճառքի ինքնարժեք ........ 21
7. Այլ եկամուտ ........ 22
8. Վարչական ծախսեր ........ 22
9. Այլ ծախսեր ........ 23
10. Ֆինանսական եկամուտ ........ 23
11. Ֆինանսական ծախսեր ........ 23
12. Փոխարժեքային տարբերություններից (վնաս)/օգուտ ........ 23
13. Շահութահարկի գծով ծախս ........ 24
14. Հիմնական միջոցներ ........ 25
15. Հետաձգված հարկ ........ 28
16. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր ........ 29
17. Կանխավճարներ հիմնական միջոցների ձեռքբերման համար ........ 30
18. Պաշարներ ........ 31
19. Ժամկետային ավանդներ ........ 31
20. Դրամական միջոցներ ........ 32
21. Սեփական կապիտալ ........ 32
21.1 Բաժնետիրական կապիտալ ........ 32
21.2 Էմիսիոն եկամուտ ........ 33
21.3 Շահաբաժիններ ........ 33
21.4 Պահուստային կապիտալ ........ 33
22. Վարկեր և փոխառություններ ........ 33
23. Ակտիվներին վերաբերող շնորհներ ........ 39
24. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր ........ 39
25. Կապակցված կողմերի միջև գործարքներ ........ 40
26. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ ........ 40
27. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն ........ 41
Հավելված Ա – ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ ........ 49

## 1. Ընկերության մասին

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 20-ի № 450 որոշման հիման վրա «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկությունը «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» պետական փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման միջոցով, այնուհետև ՀՀ կառավարության 1999 թվականի նոյեմբերի 23-ի № 709 որոշման հիման վրա «էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանություն» ՊՓԲԸ վերակազմակերպվել և միացել է Ընկերությանը:

2000 թվականի փետրվարի 10-ին Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրում Ընկերությունը վերագրանցվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն:

Ընկերությունը՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» դուստր ձեռնարկության, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՊՓԲԸ և «Էներգետիկ օբյեկտների մասնագիտացված պահպանության» ՊՓԲԸ իրավահաջորդն է:

Ընկերությունը գործում է 1999 թվականի հունիսի 18-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի կողմից թողարկված «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման գործունեության» թիվ 0006 լիցենզիայի համաձայն:

Ընկերությունը շահույթ հետապնդող առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետիրոջ պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի: Ընկերության բաժնետոմսերի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 06-ի № 1694-Ն որոշման 1-ին, 2-րդ կետերի համաձայն:

Ընկերությունն ունի 8 մասնաճյուղ՝

- Արևելյան մասնաճյուղ
- Արևմտյան մասնաճյուղ
- Գորիսի մասնաճյուղ
- Նախագիծ մասնաճյուղ
- Էներգետիկ օբյեկտների կառուցման տնօրինություն մասնաճյուղ
- Զանգեզուրի մասնաճյուղ
- Հյուսիսային մասնաճյուղ
- Հարավային մասնաճյուղ

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդում և տարանցում՝ համաձայն էլեկտրաէներգետիկական շուկայի առևտրային և ցանցային կանոնների,
2. հաղորդման ցանցի կառուցում, վերակառուցում, սպասարկում և շահագործում,
3. իր սեփականությունը հանդիսացող կամ իր տնօրինության տակ գտնվող հաշվիչների պլանային և արտապլանային նորոգման, ստուգաչափման ապահովում,
4. էներգետիկ օբյեկտների գիտահետազոտական և նախագծային աշխատանքների կատարում:

Ընկերության գործունեությունը, այդ թվում՝ սակագնային քաղաքականությունը, կարգավորվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2018 թվականին կազմել է 805 մարդ

(2017 թվականին՝ 839 մարդ):
Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Զորավար Անդրանիկի 1:

## 2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 27-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:
Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

*Չափման հիմքերը*
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

***Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ***
*ա)* 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»,
- ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ կնքած պայմանագրերից հասույթ»;
- ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ կանխավճարային եղանակով»:

Նշվածներից ոչ մեկը չունի նշանակալի ազդեցություն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

*բ) Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել*

Հետևյալ նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել և վաղաժամկետ չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվություններում, կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

| # | Հրապարակում | Հրապարակման որդեգրման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ակնկալվող փոփոխությունների էությունը | Ժամկետը, երբ նախատեսվում է ՖՀՄՍ-ի կիրառումը | Ժամկետը, երբ Կազմակերպությունը պլանավորում է առաջին անգամ կիրառել հրապարակումը | Առաջին կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվության վրա |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՖՀՄՍ 16 Վարձակալություն | *ՖՀՄՍ 16 ստանդարտի համաձայն վարձակալը ճանաչում է վաձակալվող գույք հանդիսացող ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունը: Վաձակալվող գույք հանդիսացող ակտիվները դիտարկվում և մաշվում են այլ ոչ ֆինանսական ակտիվների նման, իսկ պարտավորության գծով հաշվարկվում է տոկոսագումար: Վարձակալության գծով պարտավորությունը սկզբում չափվում է վարձակալության ժամկետի ընթացքում վճարվելիք ապագա վարձավճարների ներկա արժեքով:* | 2019թ. հունվար<br><br>Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է | 2019թ. հունվար | Ազդեցությունը դեռևս պետք է որոշվի |
| 2 | ՖՀՄՄԿ 23 Շահութահարկի գծով անորոշություն (հրապարակվել է 2017թ. հունիսին) | *Մեկնաբանությունը ներկայացնում է, թե ինչպես որոշել հարկվող շահույթը/վնասը, հարկային բազան, չօգտագործված հարկային վնասները, չօգտագործված հարկային զեղչերը և հարկային տոկոսադրույքները, երբ առկա է անորոշություն ՀՀՄՍ 12, "Շահութահարկեր", ստանդարտի հաշվառման նպատակով:* | Ուժի մեջ են մտնում 2019թ. հունվար<br><br>Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է | 2019թ. հունվար | Ազդեցություն չի նախատեսվում |

## 3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

***<u>Գնահատումներ և ենթադրություններ</u>***

***Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ***

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել (տե՛ս Ծանոթագրություն 27): Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

***Առևտրային դեբիտորական պարտքերի և տրված փոխառությունների հավաքագրելիությունը***

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիության գծով հաշվապահական հաշվառման գնահատումները կապվում են վարկային ռիսկերի հետ: Ծանոթագրություն 4-ում անդրադարձ է կատարվում ֆինանսական ակտիվների և դրանց թվում դեբիտորական պարտքերի և փոխառությունների վարկային ռիսկերի գնահատմանը:

*Իրական արժեքի չափում*

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*

- *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*

- *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

## 4. Ֆինանսական գործիքներ - Ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Այլ գնային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

### *(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ*

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Ժամկետային ավանդներ
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր
- Փոփոխական տոկոսադրույքով վարկեր

*(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների*

Ֆինանսական ակտիվներ

| | Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ | |
|---|---|---|
| | 31.12.18թ. | 31.12.17թ. |
| | հազար դրամ | հազար դրամ |
| Ժամկետային ավանդներ | 12,985,387 | 8,042,165 |
| Տրամադրված փոխառություններ | 4,688 | 5,008 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 1,550,719 | 2,826,137 |
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 232,496 | 1,227,704 |
| Ընդամենը ֆինանսական ակտիվներ | 14,773,290 | 12,101,014 |

Ֆինանսական պարտավորություններ

| | Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ | |
|---|---|---|
| | 31.12.18թ. | 31.12.17թ. |
| | հազար դրամ | հազար դրամ |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 7,576,256 | 5,949,950 |
| Վարկեր և փոխառություններ | 68,401,371 | 56,126,299 |
| *Ընդամենը ֆինանսական պարտավորություններ* | 75,977,627 | 62,076,249 |

*(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ*

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, արժեթղթերում արված ներդրումները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, ինչպես նաև վարկերը և փոխառությունները:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:
Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների, ինչպես նաև արժեթղթերում արված ներդրումների, վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 1-ից 3-րդ մակարդակներում:

*Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ*

Ընկերության գլխավոր տնօրենը ընդհանուր պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման նպատակների և քաղաքականության որոշման համար և իրավասու է պլանավորել և իրականացնել նպատակների և քաղաքականության արդյունավետ իրագործման գործընթացներ: Գլխավոր տնօրենը ամսական կտրվածքով հաշվետվություններ է ստանում Ընկերության ֆինանսական տնօրենից՝ այսպիսով ստուգելով գործընթացների արդյունավետությունը և սահմանված նպատակների և քաղաքականության պատշաճությունը:

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ֆինանսական գործիքների հետ կապված ռիսկերը՝ չանդրադառնալով Ընկերության գործունեության անընդհատության և արդյունավետության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

*Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է ապառիկ վաճառքից:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև դրամական միջոցներից և դրանց համարժեքներից և բանկերում ու ֆինանսական հաստատություններում ներդրած ավանդներից: Վերջիններիս դեպքում ընդունելի են միայն բարձր վարկանիշ ունեցող կողմերը:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի վերաբերյալ հետագա բացահայտումները, որոնք ո՛չ ժամկետանց են, ո՛չ էլ արժեզրկված, ներկայացված են Ծանոթագրություն 16-ում:

**Դրամական միջոցներ բանկում և կարճաժամկետ ավանդներ**

Դրամական միջոցներ պահվում են հետևյալ բանկերում՝

| | 31 դեկտեմբեր 2018 | | 31 դեկտեմբեր 2017 | |
|---|---|---|---|---|
| | Դրամական միջոցներ բանկերում<br>հազար դրամ | Կարճաժամկետ ավանդներ<br>հազար դրամ | Դրամական միջոցներ բանկերում<br>հազար դրամ | Կարճաժամկետ ավանդներ<br>հազար դրամ |
| ՀՀ Ֆին նախարարություն | 102,038 | - | 78,875 | - |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | 64,527 | 5,947,053 | 899,303 | 1,002,117 |
| «Ամերիաբանկ » ՓԲԸ | 42,252 | - | 10,711 | 500,805 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ | 22,149 | 7,038,334 | 237,388 | 6,539,242 |
| Այլ | 570 | - | 187 | - |
| | 231,536 | 12,985,387 | 1,226,464 | 8,042,165 |

Ընկերության ֆինանսական տնօրենը կանոնավոր կերպով ստուգում է բանկերի վարկանիշները: Հաշվետու ամսաթվի դրությամբ գործընկերների պարտականութունների չկատարման հետևանքով առաջացող վնասներ չեն ակնկալվում:

*Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

*Արտարժութային ռիսկ*

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության առանձին կազմակերպությունների

գործարքներն արտահայտված են վերջիններիս ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով: Ընկերության քաղաքականության համաձայն՝ թույլատրվում է Ընկերության կազմակերպություններին ֆունկցիոնալ արժույթով պարտավորությունները հնարավորության դեպքում մարել տվյալ արժույթով արտահայտված գործարքներից ստացված դրամական միջոցներով: Եթե Ընկերության կազմակերպություններն ունեն ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված պարտավորություններ (և դրանք մարելու համար տվյալ արժույթով արտահայտված անբավարար միջոցներ), հնարավորության դեպքում, այդ արժույթով արտահայտված դրամական միջոցները կփոխանցվեն Ընկերության այլ կազմակերպություններից:

Վերոնշյալ քաղաքականության շարունակական արդյունավետությունը վերահսկելու համար Խորհուրդը ստանում է մարման ենթակա պարտավորությունների և ակնկալվող դրամական միջոցների մնացորդների գծով ամսական կանխատեսում՝ ըստ Ընկերության հիմնական արժույթների:

Ընկերության արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով, եվրոյով և SDR-ով ստացված վարկերի գծով պարտավորություններից ինչպես նաև խոշոր մատակարարներից ԱՄՆ դոլարով և եվրոյով կատարած ձեռքբերումներից:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև՝

| Զուտ արտարժութային ակտիվներ/(պարտավորություններ) | 31.12.18թ.<br>հազար դրամ | 31.12.17թ.<br>հազար դրամ |
|---|---|---|
| EUR | (29,479,910) | (24,720,866) |
| USD | (34,621,685) | (28,087,555) |
| SDR | (5,255,096) | (3,728,776) |
| **Զուտ ակտիվային/(պասիվային) դիրք** | (69,356,691) | (56,537,197) |

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի 10% արժևորման ազդեցությունը եվրոյով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցներ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների 2,948 մլն դրամով (2017թ.՝ 2,472 մլն դրամով) նվազման, իսկ 10% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների աճին՝ նույն գումարների չափով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցներ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների 3,462 մլն դրամով (2017թ.՝ 2,809 մլն դրամով) նվազման, իսկ 10% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների աճին՝ նույն գումարների չափով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ SDR-ի 10% արժևորման ազդեցությունը SDR-ով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցներ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների 526 մլն դրամով (2017թ.՝ 373 մլն դրամով) նվազման, իսկ 10% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների աճին՝ նույն գումարների չափով:

*Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

| Վարկատու | Պայմանագրի գումարը արժույթով | Պայմանա գրի արժույթը | Մնացորդը 2018թ. Հունվարի 1-ի դրությամբ | Ստացված վարկեր | Վարկերի մարումներ | Հաշվեգրված տոկոսներ | Մարված տոկոսներ | Արտարժույթի Փոխարժեքայի ն տարբերությու | Մնացորդը 2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ)/IBRD | 39,000,000 | ԱՄՆ դոլար | 12,956,923 | 2,137,714 | - | 602,103 | (495,627) | (9,000) | 15,192,113 |
| Ֆինանսների նախարարությունից Համաֆինանսավորում-Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ)/IBRD | | ՀՀ դրամ | 3,233,607 | 93,436 | - | 149,427 | (123,283) | | 3,353,187 |
| Իրանի Արտահանման և Զարգացման Բանկ(ԻԱԶԲ) | 83,083,000 | Եվրո | 7,215,566 | 5,981,838 | (1,833,662) | 539,862 | (476,627) | (632,021) | 10,794,956 |
| World Bank | 19,600,000 | ԱՄՆ դոլար | 6,147,094 | - | (375,715) | 29,430 | (38,381) | (4,208) | 5,758,220 |
| KFW | 14,060,000 | Եվրո | 5,928,391 | - | (260,881) | 41,036 | (51,168) | (268,938) | 5,388,440 |
| KFW-Տրանշ 1 | 7,300,000 | Եվրո | 3,803,564 | 408,730 | - | 27,639 | (28,479) | (170,721) | 4,040,733 |
| KFW-Տրանշ 1համաֆինանսավորում | | ՀՀ դրամ | 2,059 | - | (2,059) | - | - | | - |
| KFW-Տրանշ 2 | 7,300,000 | Եվրո | 2,024,999 | - | (338,614) | 125,745 | (58,450) | (91,106) | 1,662,574 |
| Ֆինանսների նախարարություն | 8,988,290 | ԱՄՆ դոլար | 1,503,356 | - | (290,820) | 7,220 | (22,234) | (506) | 1,197,016 |
| Ասիական Զարգացման Բանկ(ADB) | 15,192,292 | ՀՓԻ | 3,728,776 | 1,621,348 | - | 134,930 | (117,609) | (112,350) | 5,255,095 |
| Ֆինանսների նախարարությունից Համաֆինանսավորում-Ասիական Զարգացման Բանկ(ADB) | | ՀՀ դրամ | 844,953 | 347,524 | (581) | 31,817 | (28,579) | | 1,195,134 |
| Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ)/IBRD | 37,500,000 | ԱՄՆ դոլար | 3,398,353 | 2,870,263 | (47,623) | 259,011 | (130,706) | 2,838 | 6,352,136 |
| Ֆինանսների նախարարությունից Համաֆինանսավորում- Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ)/IBRD | | ՀՀ դրամ | 300,371 | 282,600 | (1,105) | 21,136 | (10,805) | | 592,197 |
| Սանիր Ինթերնեյշնլ ՖԶԷ | 24,817,000 | Եվրո | 2,307,474 | 1,121,906 | (562,309) | 80,634 | - | (182,262) | 2,765,443 |
| Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ)/IBRD | 28,194,486 | ԱՄՆ դոլար | 1,434,244 | 1,736,022 | (22,552) | 92,478 | (84,544) | 1,603 | 3,157,251 |
| Ֆինանսների նախարարությունից Համաֆինանսավորում-Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ)/IBRD | | ՀՀ դրամ | 476,300 | 425,000 | (1,045) | 24,106 | (17,587) | | 906,774 |
| Գերմանիայի Զարգացման Վարկերի Բանկ(KFW) | 10,200,000 | Եվրո | 549,719 | - | - | 22,067 | (16,831) | (25,136) | 529,819 |
| Ֆինանսների նախարարությունից Համաֆինանսավորում-Գերմանիայի Զարգացման Վարկերի Բանկ(KFW) | | ՀՀ դրամ | 218,581 | - | - | 1,640 | (1,639) | | 218,582 |
| Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ( R2e2)-Զանգեզուր և Գորիս մասնաճյուղեր | 27,600,000 | ՀՀ դրամ | 19,403 | - | (3,067) | 217 | - | | 16,553 |
| Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ( R2e2)-Արևելյան մասնաճյուղ | 26,900,000 | ՀՀ դրամ | 17,145 | - | (4,483) | 182 | - | | 12,844 |
| Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ( R2e2)-Հարավային մասնաճյուղ | 23,000,000 | ՀՀ դրամ | 15,422 | - | (3,286) | 168 | - | | 12,304 |
| Գերմանիայի Զարգացման Վարկերի Բանկ(KFW) | 83,000,000 | Եվրո | - | - | - | 115,714 | (115,500) | (214) | - |
| Գերմանիայի Զարգացման Վարկերի Բանկ(KFW) | 75,000,000 | Եվրո | - | | | 104,574 | (104,367) | (207) | - |
| **Ընդամենը** | | | **56,126,300** | **17,026,381** | **(3,747,802)** | **2,411,136** | **(1,922,416)** | **(1,492,228)** | **68,401,371** |

Վարկերի շարժը համապատասխան արժույթներով ներկայացված է ստորև՝

| Վարկատու | Պայմանագրի գումարը արժույթով | Պայմանագրի արժույթը | Մնացորդը 2018թ. Հունվարի 1-ի դրությամբ | Ստացված վարկեր | Վարկերի մարումներ | Հաշվեգրված տոկոսներ | Մարված տոկոսներ | Մնացորդը 2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (ՎԶՄԲ)/IBRD | 39,000,000 | ԱՄՆ դոլար | 26,764,973 | 4,419,491 | - | 1,239,350 | (1,018,929) | 31,404,885 |
| Իրանի Արտահանման և Զարգացման Բանկ(ԻԱԶԲ) | 83,083,000 | եվրո | 12,438,488 | 10,526,921 | (3,595,366) | 949,185 | (821,430) | 19,497,798 |
| World Bank | 19,600,000 | USD | 12,697,985 | - | (776,190) | 60,793 | (79,292) | 11,903,296 |
| KFW | 14,060,000 | եվրո | 10,219,602 | - | (468,684) | 73,575 | (91,918) | 9,732,575 |
| KFW-Տրանշ 1 | 7,300,000 | եվրո | 6,556,738 | 743,276 | - | 49,560 | (51,223) | 7,298,351 |
| KFW-Տրանշ 2 | 7,300,000 | եվրո | 3,490,777 | - | (608,333) | 225,399 | (104,910) | 3,002,933 |
| Ֆինանսների Նախարարություն | 8,988,290 | ԱՄՆ դոլար | 3,105,464 | - | (600,000) | 14,941 | (45,954) | 2,474,451 |
| Ասիական Զարգացման Բանկ(ADB) | 15,192,292 | ՀՓԻ | 5,408,568 | 2,399,964 | - | 198,278 | (172,622) | 7,834,188 |
| Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (ՎԶԵԲ)/IBRD | 37,500,000 | ԱՄՆ դոլար | 7,019,938 | 5,945,953 | (100,000) | 535,793 | (270,654) | 13,131,030 |
| Սանիր Ինթերնեյշնլ ՖԶԷ | 24,817,000 | եվրո | 3,977,717 | 1,949,600 | (1,073,941) | 141,554 | - | 4,994,930 |
| Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (ՎԶԵԲ)/IBRD | 28,194,486 | ԱՄՆ դոլար | 2,962,703 | 3,594,470 | (47,114) | 190,318 | (173,759) | 6,526,618 |
| Գերմանիայի Զարգացման Վարկերի Բանկ(KFW) | 10,200,000 | եվրո | 947,627 | - | - | 39,568 | (30,238) | 956,957 |
| Գերմանիայի Զարգացման Վարկերի Բանկ(KFW) | 83,000,000 | եվրո | - | - | - | 207,500 | (207,500) | - |
| Գերմանիայի Զարգացման Վարկերի Բանկ(KFW) | 75,000,000 | եվրո | - | - | - | 187,500 | (187,500) | - |
| **Ընդամենը** | | | **95,590,580** | **29,579,675** | **(7,269,628)** | **4,113,314** | **(3,255,929)** | **118,758,012** |

## 23. Ակտիվներին վերաբերող շնորհներ

| | 2018թ. *հազար դրամ* | 2017թ. *հազար դրամ* |
|---|---|---|
| Տարեսկզբի մնացորդ | 519,046 | 521,631 |
| Տարվա ընթացքում ստացված | - | 379,663 |
| Վերադասակարգված եկամուտներին վերաբերող շնորհներին | - | (382,248) |
| Ճանաչված շահույթում կամ վնասում | (904) | - |
| Տարեվերջի մնացորդ | 518,142 | 519,046 |

Ակտիվներին վերաբերող շնորհների մնացորդը ներառում է հետևյալ գործընկերների կողմից տրամադրված գումարները

| | 31.12.18թ. *հազար դրամ* | 31.12.17թ. *հազար դրամ* |
|---|---|---|
| Հարևանության ներդրումային ծրագիր (ՀՆԾ) | 233,846 | 233,846 |
| KFW | 131,144 | 131,144 |
| IBRD | 145,338 | 145,338 |
| Այլ | 7,814 | 8,718 |
| | 518,142 | 519,046 |

Ընկերությունը տարբեր ծրագրեր իրականացնելու նպատակով շնորհներ է ստացել միջազգային բանկերից և հաստատություններից, որոնց մանրամասները ներկայացված են ստորև.

- Հայաստան և Վրաստան բարձր լարման գլխավոր գծերի ցանցի համար ներդրում և տեխնիկական օժանդակություն,
- Կովկասի էլեկտրահաղորդման ցանցի կառուցման և խորհրդատվական աշխատանքներ (էլեկտրահաղորդման գիծ և ԲԼՀՀՓԿ Հայաստանի և Վրաստանի գիծ)
- Էլեկտրահաղորդման Ցանցի Բարելավման նախագծի պատրաստություն, խորհրդատվություն և ուսուցողական ծրագրեր:

## 24. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| | 31.12.18թ. հազար դրամ | 31.12.17թ. հազար դրամ |
|---|---|---|
| Հիմնական միջոցների ձեռքբերման գծով | 7,406,213 | 5,783,324 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին | 132,660 | 146,181 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 37,383 | 20,445 |
| **Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ՝ վարկերի և փոխառությունների** | 7,576,256 | 5,949,950 |
| Ստացված կանխավճարներ* | 9,159,899 | 9,139,271 |
| Վճարվելիք հարկեր և պարտավորություններ | 1,040,939 | 1,526,288 |
| Այլ | 25 | 50 |
| | 17,777,119 | 16,615,559 |

*Կանխավճարները ստացվել են Գազպրոմ-Արմենիա ՓԲԸ-ից 2007թ.-ին՝ Իրան-Քաջարան գազատար խողովակաշարի ձեռքբերման համար, որը ներառված է ծանոթագրություն 14-ում:

Հիմնական միջոցների ձեռքբերման գծով կրեդիտորական պարտքերը ներառում են հետևյալ գործընկերների մնացորդները.

| | 31.12.18թ. հազար դրամ | 31.12.17թ. հազար դրամ |
|---|---|---|
| SUNIR | 4,258,225 | 2,821,835 |
| Liaoning-Efacec Electrical EquipmentCo. LTD | 1,178,772 | 524,802 |
| Xian Electric Engineering Co LTD China | 938,584 | 212,627 |
| KASKAD-ENERGO LLC | 799,983 | 104,372 |
| EFACECENGENHARIAESISTEMASS.A. | 116,370 | - |
| GAM ARAK INDUSTRIAL COMPANY | 106,877 | - |
| KALPATARU POWER TRANSMISSION LTD | - | 2,052,897 |
| Այլ | 7,402 | 66,791 |
| | 7,406,213 | 5,783,324 |

Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

## 25. Կապակցված կողմերի միջև գործարքներ

Հայաստանի Հանրապետության Կառավարությանը պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%, հետևաբար բոլոր պետական ձեռնարկությունները համարվում են Ընկերությանը կապակցված: Ընկերության կապակցված կողմերը ներառում են նաև հիմնական ղեկավար անձնակազմը, որոնց իրականացված հատուցումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 8-ում:

## 26. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետևանքներ

2018թ. ընթացքում հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ փոփոխություններ չեն եղել:

27. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

**Արտարժութային գործարքներ**

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2018թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.75 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 553.65 դրամ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 484.10 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 580.10 դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը):

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

**Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | | |
|---|---|---|
| Շենքեր և շինություններ | - | 30 տարի |
| Փոխանցող հարմարանքներ | - | 30 տարի |
| Մեքենաներ և սարքավորումներ | - | 5-20 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | - | 5-15 տարի |
| Տնտեսական գույք և այլն | - | 5-10 տարի |

**Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որոնք ներկայացված են ստորև.

| | | |
|---|---|---|
| Լիցենզիաներ և արտոնագրեր | - | 5 տարի |
| Համակարգչային ծրագրեր | - | 5-10 տարի |

**Վարձակալված ակտիվներ**

Վարձակալությունները դասակարգվում են որպես ֆինանսական, երբ վարձակալին են փոխանցվում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ:

Ընկերությունը որպես վարձատու

Գործառնական վարձակալությունից ստացված վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով համապատասխան վարձակալության ընթացքում:

Ընկերությունը որպես վարձակալ

Գործառնական վարձակալության գծով վճարները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ընթացքում: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

**Պաշարներ**

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

**Ֆինանսական գործիքներ**

Ընկերությունն իր ֆինանսական գործիքները դասակարգում է ստորև ներկայացված կատեգորիաներից մեկով:

**Ֆինանսական ակտիվներ**

*Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Այս ակտիվները հիմնականում առաջանում են հաճախորդներին ապրանքների եւ ծառայությունների մատուցումից (օրինակ `առեւտրային դեբիտորական պարտքեր), ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝

նվազեցման արժեզրկման պահուստը:

Ընթացիկ եւ ոչ ընթացիկ առեւտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առեւտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետեւ, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առեւտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով: Զուտ արժեքով ներակայացվող առեւտրային դեբիտորական պարտքերի գծով, այդպիսի պահուստները հաշվառվում են առանձին հաշվով՝ ներառելով որպես իրացման ինքնարժեք համապարփակ արդյունքի հաշվետվությունում: Առեւտրային դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր, ինչպես նաեւ դրամական միջոցները եւ դրանց համարժեքները: Դրամական միջոցները եւ դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ:

*Իրական արժեքը այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ընկերությունը իր ներդրումների համար կարող է կատարել անշրջելի ընտրություն՝ տվյալ ներդրումները իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտով, դասակարգելու համար, այլ ոչ թե շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ Ընկերությունը այդ չափումը համարում է իր բիզնես մոդելին առավել համապատասխան: Դրանք հաշվառվում են իրական արժեքով, իրական արժեքի փոփոխութությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում և իրական արժեքի փոփոխությունները կուտակվում են սեփական կապիտալում՝ այլ համապարփակ եկամտային պահուստի հոդվածում: Օտարումից հետո համապարփակ ֆինանսական արդյունքի պահուստում առկա իրական արժեքի մնացորդը ուղղակիորեն փոխանցվում է կուտակված շահույթին և չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:
Այս ներդրումներից ստացված շահաբաժինները և տոկոսային եկամուտները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե շահաբաժինն ակնհայտորեն չի ներկայացնում ներդրման արժեքի որոշ փոխհատուցում, որի դեպքում շահաբաժինը նվազեցվում է ներդրման հաշվեկշռային արժեքից:
Ընկերությունը այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվ չունի:

*Իրական արժեքը շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ընկերությունը իր ներդրումները կարող է դասակարգել որպես իրական արժեքը շահույթի կամ վնասի միջոցով չափվող ակտիվների դասում: Այս ակտիվները Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ արտացոլվում են իրական արժեքով, իսկ դրանց իրական արժեքի փոփոխությունները արտացոլվում են Ընկերության շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության ֆինանսական եկամուտ կամ ծախս տողերում:
Այս ներդրումներից ստացված շահաբաժինները և տոկոսային եկամուտները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե շահաբաժինն ակնհայտորեն չի ներկայացնում ներդրման արժեքի որոշ փոխհատուցում, որի դեպքում շահաբաժինը նվազեցվում է ներդրման հաշվեկշռային արժեքից:
Ընկերությունը այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվ չունի:

*Ֆինանսական պարտավորություններ*

*Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող*

Սույն կատեգորիայում ներառված են միայն ոչ ձեռնտու (out-of-the-money) պարտավորությունները և հաշվառվում են իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Դրանք ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են Ընկերության շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության:
Ընկերությունը այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական պարտավորություն չունի:

*Այլ ֆինանսական պարտավորություններ*

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են հետևյալը՝

- Փոխառությունները բանկերից և Ընկերության անժամկետ արտոնյալ բաժնետոմսերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործիքի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Հետագայում նման տոկոսաբեր պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունվետ տոկոսադրույքի մեթոդը, համաձայն որի՝ պարտավորության մարման ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում տոկոսային ծախսերի հաշվարկը կատարվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ներառված պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն դրույքի կիրառմամբ: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության նպատակներից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են գործարքի հետ կապված սկզբնական ծախսերը, մարման ժամանակ վճարվելիք այլ հավելյալ վճարներ, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները կամ արժեկտրոնները:

- Փոխարկելի պարտքի պարտավորության բաղադրիչը չափվում է ստորև ներկայացվածի համաձայն:

- Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը:

**Սեփական կապիտալ**

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:
Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնեմասերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամտից:
Էմիսիոն վնասն իրենից ներկայացնում է մարված բաժնետոմսերի անվանական արժեքի և դրանց մարման գնի տարբերությունը: Բաժնետոմսերի թողարկումից և մարումից օգուտն ու վնասը ներկայացված են սեփական կապիտալում՝ զտված:
Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Ընկերության սափականատերերի հետ բոլոր գործարքները սեփական կապիտալում առանձին են գրանցված:
Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

**Փոխառության ծախսումներ**

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս: Ընկերությունն այլ փոխառության ծախսումները ճանաչում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են: Ընկերությունը սկսում է կապիտալացնել փոխառության ծախսումները որպես որակավորվող ակտիվի արժեքի մաս՝ մեկնարկի ամսաթվին, երբ Ընկերությունն առաջին անգամ բավարարում է հետևյալ բոլոր պայմաններին. ակտիվի համար կատարում է ծախսեր, կատարում է փոխառության ծախսումներ, ձեռնարկում է այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են՝ ակտիվը օգտագործման կամ վաճառքի նա- խատեսված վիճակի բերելու համար:
Այնքանով, որքանով Ընկերությունը միջոցները բացառապես փոխառնում է որակավորվող ակտիվ ձեռք բերելու նպատակով, փոխառության ծախսումների գումարը, որը ենթակա է այդ ակտիվի վրա կապիտալացման, Ընկերությունը որոշում է որպես փոխառության փաստացի ծախսումներ, որոնք առաջանում են այդ փոխառությունից տվյալ ժամանակաշրջանում՝ հանած այդ փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումից ստացվող ցանկացած եկամուտ:
Այնքանով, որքանով Ընկերությունը միջոցները փոխառնում է ընդհանուր նպատակներով և օգտագործում է որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով, Ընկերությունը կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշում է՝ այդ ակտիվի գծով ծախսերի նկատմամբ կիրառելով կապիտալացման դրույքը: Կապիտալացման դրույքը տվյալ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության չմարված փոխառություններին վերաբերող փոխառության ծախսումների միջին կշռված մեծությունն է, բացառությամբ այն փոխառությունների, որոնք բացառապես կատարվել են որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով:

Փոխառության ծախսումների կապիտալացումը կասեցվում է այն ժամանակաշրջանի ընթացքում, որի ժամանակ Ընկերությունը դադարեցնում է որակավորվող ակտիվների վրա կատարվող աշխատանքները: Փոխառության ծախսումների կապիտալացումը դադարեցվում է, երբ էական բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ են որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար, ավարտված են:

**Շնորհներ**

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:
Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:
Հողերին վերաբերող շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց վրա գտնվող շենքերի մաշվածության ժամանակաշրջանի ընթացքում:
Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

**Պահուստներ**
Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

**Շահութահարկ**
Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:
Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից:
Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա:
Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:
Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

**Հատուցումներ աշխատակիցներին**
Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնքբենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանիվավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝
(ա) աշխատավարձերը և պարգևատրումները,
(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց,

ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գու- մար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները հետևյալն են.

ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխա- տակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

*Հասույթի ճանաչում*

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները: Հասույթից նվազեցվում են հաճախորդների կողմից վերադարձվելիք ապրանքների գնահատված գումարը, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

**Ապրանքների վաճառք**

Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները.

- Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,
- Ընկերությունը չի պահպանում ո՟չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՟չ էլ՝ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները:

**Ծառայությունների մատուցում**

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,

- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

### Կատարողական պարտականություն եւ հասույթի ճանաչման պահը

Ընկերության հասույթն առաջանում է արտադրված էլեկտրաէներգիայի վաճառքից և էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայություններից:
Հասույթը ճանաչվում է ամսական հիմունքով՝ հիմնվելով փաստացի հաղորդված էլեկտրաէներգիայի և փաստացի վաճառված էլեկտրաէներգիայի վրա:

Վերահսկման փոխանցումը հիմնականում տեղի ունի, երբ հոսանքը հաղորդվում է հաճախորդին: Վերահսկողության փոխանցման պահը որոշելու համար նման դեպքերում չի պահանջվում բարդ դատողություն: Երբ հոսանքը հաղորդվել է համաձայնեցված վայր, ապա դրանից հետո Ընկերությունը այլեւս չունի տնօրինման իրավունք, սովորաբար ձեռք է բերում վճարման ստացման իրավունք եւ չի պահպանում ծառայության հետ կապված նշանակալի զգալի ռիսկեր կամ հատույցներ:

### Գործարքի գնի որոշում

Ընկերության հասույթները ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից եւ, հետեւաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով: Փոխանցված էներգիայի սակագինը հաստատվում է Կառավարության որոշմամբ:

### Գնի բաշխում կատարողական պարտականությունների վրա

Պայմանագրերի մեծ մասի դեպքում յուրաքանչյուր ապրանքի համար ֆիքսված է միավորի գինը, իսկ որոշակի ժամանակահատվածում մեծաքանակ պատվերների դեպքում տրվում է զեղճ: Հետեւաբար, յուրաքանչյուր միավորի վրա գնի բաշխումը բարդ դատողություն չի պահանջում (այսինքն `ընդհանուր պայմանագրի գինը բաժանված է պատվերի թվաքանակի վրա):

### Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

### Վարձակալական եկամուտ

Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

## Հավելված Ա – ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է 31.12.2018թ. դրությամբ այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

| Հոդված | Իրական արժեք մլն. ՀՀ դրամ | Գնահատման մեթոդ | Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ | Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ |
|---|---|---|---|---|
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 1,550 | *Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) առևտրային դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին, երկարաժամկետ դեբիտորական պարտքերը զեղչվել են 5.26%-ով | Մակարդակ 3 | Առկա չեն |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 7,576 | *Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին: | Մակարդակ 3 | Առկա չեն |
| Ստացված վարկեր | 68,401 | Ստացված վարկերի հաշվեկշռային արժեքը համընկնում է դրանց իրական արժեքի հետ: Օգտագործվել են հետևյալ արդյունավետ զեղչման տոկոսադրույքները. 0.5-4.5% ԱՄՆ դոլարով վարկերի համար, 0.72-6.69% եվրոյով ստացված վարկերի համար և 3.12% SDR-ով ստացված վարկերի համար | Մակարդակ 3 | Առկա չեն |